



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2019թ. թիվ 647-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետարանին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման նպատակով հաստատել ՀՀ Լոռու մարզպետարանում զբոսաշրջության ոլորտի զարգացման փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

15/11/19

X 

ԱՆՂԻՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. նոյեմբերի 15-ի
թիվ 647-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացման փորձագետի

Փորձագետի ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Լոռու մարզում զբոսաշրջության ոլորտի ռազմավարության մշակման և համակարգման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

1. Իրականացնել մարզի զբոսաշրջային քարտեզագրում,
2. Ստեղծել զբոսաշրջային նոր պրոդուկտներ, մասնակցել առկա հնարավորությունների զարգացմանը և նորացմանը,
3. Մշակել մարզի 2021-2025 թթ. զբոսաշրջային ռազմավարության հիմքերը,
4. Կազմել զբոսաշրջային պրոդուկտների արդյունավետությունը ստուգող գնահատման համակարգ,
5. Կազմակերպել և իրականացնել ոլորտի մասնակիցների համար նախատեսված վերապատրաստումներ և դասընթացներ,
6. Ներգրավել տեղական, պետական, միջազգային կազմակերպություններին և շահագրգիռ կառույցներին՝ մարզի զբոսաշրջային ներդրումային փաթեթը ստեղծելու գործում,
7. Կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ ներկայացնել պարբերական հաշվետվություններ:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքը

Մարզի 2021-2025 թթ. զբոսաշրջային ռազմավարության հիմքերի, զբոսաշրջային նոր պրոդուկտների ձևավորում:

Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և վերջնական ամփոփմամբ:

Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ անգամ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ

Ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարված աշխատանքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Գործարարություն և վարչարարություն ոլորտի բարձրագույն կրթություն,
2. Պետական և միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ (զբոսաշրջային ոլորտի աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն),
3. Հաշվետվությունների կազմման, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ,
4. Համակարգչով և ժամանակակալից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
5. Թիմում աշխատելու ունակություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

11/15/2019

X



ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ